Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԵՐԿԼԵՁՈՒ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BILINGUAL BULLETIN

1: Today's Scripture Reading, 8th June 2025 Bulletin 25/2025

Pentecost (Eve of the Fast of Elijah)

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ 2:1-21

Pentecost, the Descent of the Holy Spirit

Երբ Պենտեկոստէի տօնը հասաւ, բոլորն ալ միաբան՝ մէկ տեղ էին: Յանկարծ շառաչ մը եղաւ երկինքէն՝ սաստկաշունչ հովի մը ձայնին պէս, ու լեցուց ամբողջ տունը՝ ուր նստած էին: Եւ բաժնուած լեզուներ երեւցան իրենց՝ որպէս թէ կրակէ, ու հանգչեցան անոնցմէ իւրաքանչիւրին վրայ: Բոլորն ալ լեցուեցան Սուրբ Հոգիով եւ սկսան խօսիլ ուրիշ լեզուներով, ինչպէս Հոգին իրենց խօսիլ կու տար:

Երուսաղէմ բնակող Հրեաներ կային, բարեպաշտ մարդիկ՝ երկինքի տակ եղած ամէն ազգէ: Երբ այս ձայնը եղաւ, բազմութիւնը համախմբուեցաւ ու շփոթեցաւ, որովհետեւ կը լսէին թէ անոնք կը խօսէին իրենցմէ իւրաքանչիւրին սեփական բարբառով: Բոլորն ալ զմայլած էին եւ կը զարմանային՝ իրարու ըսելով. «Ահա՛ ասոնք բոլորն ալ՝ որ կը խօսին, միթէ Գալիլեացի չե՞ն: Ուրեմն ի՞նչպէս կը լսենք՝ մեր իւրաքանչիւրին սեփական բարբառով, այն երկրին՝ որուն մէջ ծնած ենք.Պարթեւներ, Մարեր ու Եղամացիներ, եւ անոնք որ կը բնակին Միջագետքի, Հրէաստանի, Կապադովկիայի, Պոնտոսի, Ասիայի, Փռիւգիայի, Պամփիւլիայի ու Եգիպտոսի մէջ, եւ Կիւրենէի մօտ՝ Լիպիայի կողմերը, նաեւ Հռոմէն գաղթած Հրեաներ ու նորահաւատներ, Կրետացիներ եւ Արաբներ, կը լսենք թէ անոնք կը խօսին Աստուծոյ մեծամեծ գործերուն մասին՝ մե՛ր լեզուներով»: Բոլորն ալ զմայլած էին, ու տարակուսած՝ կ'ըսէին իրարու. «Ի՞նչ կրնայ ըլլալ ասիկա»: Ոմանք ալ ծաղրելով կ'ըսէին. «Անոնք լի են անոյշ գինիով»:

Բայց Պետրոս կանգնեցաւ տասնմէկին հետ, բարձրացուց ձայնը եւ ըսաւ անոնց. «Ո՛վ Հրէաստանցիներ, ու դուք բոլորդ՝ որ կը բնակիք Երուսաղէմ, սա՛ գիտցէ՛ք եւ մտի՛կ ըրէք իմ խօսքերս. որովհետեւ ասոնք ո՛չ թէ արբեցած են՝ ինչպէս դուք կ'ենթադրէք, քանի դեռ օրուան երրորդ ժամն՝ է, հապա ասիկա ա՛յն է՝ որ ըսուեցաւ Յովէլ մարգարէին միջոցով.

"Վերջին օրերը,- կ'ըսէ Աստուած,- իմ Հոգիէս պիտի թափեմ ամէն մարմինի վրայ, եւ ձեր որդիներն ու աղջիկները պիտի մարգարէանան, ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի տեսնեն, ու ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն:

Իմ ծառաներուս եւ աղախիններուս վրայ ալ այդ օրերը իմ Հոգիէս պիտի թափեմ, ու պիտի մարգարէանան:

Վերը՝ երկինքը՝ սքանչելիքներ ցոյց պիտի տամ, եւ վարը՝ երկիրը՝ նշաններ, արիւն, կրակ ու ծուխի մառախուղ. արեւը պիտի փոխուի խաւարի, եւ լուսինը՝ արիւնի, դեռ Տէրոջ մեծ ու երեւելի օրը չեկած:

Եւ ո՛վ որ կանչէ Տէրոջ անունը՝ պիտի փրկուի":

Our Aim;
St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

Acts 2:1-21

The Holy Spirit Comes at Pentecost

Pentecost

When the day of Pentecost came, they were all together in one place. Suddenly a sound like the blowing of a violent wind came from heaven and filled the whole house where they were sitting. They saw what seemed to be tongues of fire that separated and came to rest on each of them. All of them were filled with the Holy Spirit and began to speak in other tongues [a] as the Spirit enabled them.

Now there were staying in Jerusalem God-fearing Jews from every nation under heaven. When they heard this sound, a crowd came together in bewilderment, because each one heard their own language being spoken. Utterly amazed, they asked: "Aren't all these who are speaking Galileans? Then how is it that each of us hears them in our native language? Parthians, Medes and Elamites; residents of Mesopotamia, Judea and Cappadocia, Pontus and Asia, [b] Phrygia and Pamphylia, Egypt and the parts of Libya near Cyrene; visitors from Rome (both Jews and converts to Judaism); Cretans and Arabs—we hear them declaring the wonders of God in our own tongues!" Amazed and perplexed, they asked one another, "What does this mean?"

Some, however, made fun of them and said, "They have had too much wine."

Peter Addresses the Crowd

Then Peter stood up with the Eleven, raised his voice and addressed the crowd: "Fellow Jews and all of you who live in Jerusalem, let me explain this to you; listen carefully to what I say. These people are not drunk, as you suppose. It's only nine in the morning! No, this is what was spoken by the prophet Joel:

" 'In the last days, God says, I will pour out my Spirit on all people.

Your sons and daughters will prophesy, your young men will see visions, your old men will dream dreams.

Even on my servants, both men and women, I will pour out my Spirit in those days, and they will prophesy.

I will show wonders in the heavens above and signs on the earth below, blood and fire and billows of smoke.

The sun will be turned to darkness and the moon to blood before the coming of the great and glorious day of the Lord.

And everyone who calls on the name of the Lord will be saved.' [c]

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 14:25-31

Այս բաները խօսեցայ ձեզի, քանի դեռ կը մնամ ձեր քով: Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը պիտի ղրկէ իմ անունովս, անիկա՛ պիտի սորվեցնէ ձեզի ամէնը, եւ ինչ որ ըսի ձեզի՝ պիտի յիշեցնէ ձեզի: Խաղաղութիւն կը թողում ձեզի, ի՛մ խաղաղութիւնս կու տամ ձեզի. ես չեմ տար ձեզի ա՛յնպէս՝ ինչպէս աշխարհը կու տայ: Ձեր սիրտը թող չվրդովի ու չերկնչի: Լսեցիք թէ ըսի ձեզի. "Ես կ'երթամ, բայց դարձեալ պիտի գամ ձեզի": Եթէ սիրէիք զիս, պիտի ուրախանայիք՝ որ ես կ'երթամ Հօրը քով, որովհետեւ իմ Հայրս ինձմէ մեծ է: Եւ այժմէն՝ դեռ չեղած՝ ըսի ձեզի, որպէսզի երբ ըլլայ՝ հաւատաք: Ա՛լ շատ պիտի չխօսիմ ձեզի հետ, որովհետեւ այս աշխարհի իշխանը կու գայ. բայց ո՛չ մէկ հեղինակութիւն ունի իմ վրաս: Սակայն աշխարհը թող գիտնայ թէ ես կը սիրեմ Հայրը, եւ կ'ընեմ ա՛յնպէս՝ ինչպէս Հայրը պատուիրեց ինծի:

Ոտքի՛ ելէք, երթա՛նք ասկէ»:

Dear Parishioners and Armenian Community Members:

The Sunday collection plate circulating during Divine Liturgy is for all to contribute each Sunday in order to have a thriving church. Your donation, participation and support is vital, not only by attending the church but also with your time and financial contribution to our church. Please be generous in order for us to keep the doors open and provide all the services.

The Holy Gospel of Jesus Christ according to John 14:25-31

"All this I have spoken while still with you. But the Advocate, the Holy Spirit, whom the Father will send in my name, will teach you all things and will remind you of everything I have said to you. Peace I leave with you; my peace I give you. I do not give to you as the world gives. Do not let your hearts be troubled and do not be afraid.

"You heard me say, 'I am going away and I am coming back to you.' If you loved me, you would be glad that I am going to the Father, for the Father is greater than I. I have told you now before it happens, so that when it does happen you will believe. I will not say much more to you, for the prince of this world is coming. He has no hold over me, but he comes so that the world may learn that I love the Father and do exactly what my Father has commanded me.

"Come now; let us leave.

Celebrating Pentecost Day:
The Birthday of the Church

Հոգեգալուստ (Պենտեկոստե)

Holy Spirit Dove Fire

Առաքյալների վրա Սբ. Հոգու իջման հիշատակության Տոնն է, որ տեղի է ունեցել Սբ. Հարության հիսուներորդ օրը: Այդ պատճառով էլ Հոգեգալուստը միշտ տոնում են Զատիկից հիսուն օր հետո: Սբ. Հոգին Սբ. Երրորդության երեք անձերից մեկն է, համագո եւ հավասար Հորը եւ Որդուն: Քրիստոս Իր երկրային գործունեության ընթացքում առաքյալների հետ խոսել էր Սբ. Հոգու գալստյան մասին. «Իսկ Մխիթարիչը՝ Սբ. Հոգին, որին Հայրը կուղարկի Իմ անունով, Նա ձեզ ամեն բան կուսուցանի եւ ձեզ կհիշեցնի այն ամենը, ինչ Ես ասացի ձեզ» (Հովհ. 14:26):

Սբ. Հոգու գալուստը նկարագրված է Գործք Առաքելոցում. «Երբ Պենտեկոստեի օրերը լրացան, բոլորը միասիրտ, միատեղ էին: Եւ հանկարծակի երկնքից հնչեց մի ձայն՝ սաստիկ հողմից եկած ձայնի նման. և լցրեց այն տունը: Եւ նրանց երեւացին բաժանված լեզուներ՝ նման բոցեղեն լեզուների, որոնք նստեցին յուրաքանչյուրի վրա: Եւ բոլորը լցվեցին Սուրբ Հոգով ու սկսեցին խոսել ուրիշ լեզուներով, ինչպես որ Սուրբ Հոգին նրանց խոսել էր տալիս» (Գործք 2:1-4):

Աստվածաշնչյան այս հատվածում նշվում են տարբեր երկրների անուններ, որտեղից եկածները զարմանում են՝ յուրաքանչյուրն իր հարազատ լեզուն լսելով: Հիշատակված տեղանունների թվում են նաեւ Միջագետքը, Հրեաստանը եւ Գամիրքը (Գործք 2:9): Եկեղեցական սուրբ հայրերից Տերտուղիանոսն ու Օգոստինոսը պնդում են, որ ավելի ճիշտ կլինի Հրեաստան բառը փոխարինել Հայաստան բառով, քանի որ ավելի տրամաբանական է, որ օտար երկրների շարքում նշված լինի Հայաստանը: Բացի այդ, աշխարհագրական առումով Միջագետքի և Գամիրքի միջև գտնվում է Հայաստանը:

Հետեւաբար՝ այս նշանավոր իրադարձությանն ականատես են եղել նաև հայերը: Հայ Առաքելական Եկեղեցում Հոգեգալստյան շարականներից են «Առաքելոյ աղաւնոյ» (Սբ. Հոգին աղավնու տեսքով իջել է Հիսուս Քրիստոսի մկրտության ժամանակ) եւ «Երրորդութիւն անբաժանելի» շարականները, որոնք երգվում են առավոտյան ժամերգության ընթացքում: Իսկ երեկոյան ժամերգությունում կատարվում է անդաստանի արարողություն և ընթերցվում 12-րդ դարի Հայ եկեղեցու հայրերից Ներսես Լամբրոնացու այս առթիվ գրված աղոթքը:

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

Քրիստոնեական Եկեղեցում շնորհի վարդապետությունը կապված է Սբ. Հոգու հետ: Ըստ այդ վարդապետության՝ յուրաքանչյուր առաքինություն աստվածային պարգև է, որ տրվում է հավատացյալին Սբ. Հոգուց, և որևէ առաքինության վերագրումը սեփական անձին և ոչ թե Աստծուն, հպարտության տանող մեծ մեղք է: Հետևաբար, Հոգեգալստի հիշատակումը նաև կոչ է յուրաքանչյուր հավատացյալին՝ հպարտությունից խուսափել և աստվածային շնորհներով միայն բարի գործեր կատարել: Երկուշաբթիից սկսվում է Եղիական պահքը:

Հայ Առաքելական եկեղեցու կողմից սահմանված տարվա չորս եղանակի պահքերից սա ամառնամուտի շաբաթապահքն է: Ինչպես մյուս եղանակների պահքերը, Եղիական պահքը ևս եկեղեցական որեւէ տոնի պատրաստություն չէ: Ըստ ավանդության՝ Եղիական է կոչվում միայն այն պատճառով, որ նախորդում է շաբաթապահքի հաջորդ կիրակիին՝ Եղիա մարգարեի հիշատակության տոնին: Ամառվա այս պահքն սկսվում է Հոգեգալստյան կիրակիի հաջորդ օրը (պահքի բարեկենդանը՝ Հոգեգալստյան կիրակի): Ճատկի օրվա փոփոխման հետ պահքի սկիզբը կարող է փոփոխվել մայիսի 11-ից մինչև հունիսի 14-ն ընկած ժամանակահատվածում: Մյուս եղանակների պահքերի նման, այս պահքը ևս տեւում է 5 օր՝ երկուշաբթիից մինչև ուրբաթ:

Feast of Pentecost

The Feast of Pentecost is the commemoration of the descent of the Holy Spirit upon the Apostles on the fiftieth day following the Feast of the Glorious Resurrection of Our Lord Jesus Christ. The Armenian Church celebrates this feast 50 days following Easter Sunday.

The Holy Spirit is one of the three persons in the Holy Trinity coexisting with, and equal to, the Holy Father and the Holy Son. During His earthly life and ministry Christ spoke to the Apostles about the coming of the Holy Spirit. Recording the words of Christ, St. John writes, “The Comforter, the Holy Spirit, whom the Father will send in my name, will teach you everything and make you remember all that I have told you.” (John 14:26).

The descent of the Holy Spirit is described in the Acts of the Apostles: “When the day of the Pentecost came, all the believers were gathered together in one place. Suddenly there was a noise from the sky which sounded like a strong wind blowing, and it filled the whole house where they were sitting. Then they saw what looked like tongues of fire which spread out and touched each person there. They were all filled with the Holy Spirit and began to talk in other languages, as the Spirit enabled them to speak. (Acts 2:1-4).

In the book of Acts, St. Luke further records the names of various countries, and that men from those countries were surprised, when each of them heard his native language. Among the mentioned places are Mesopotamia, Judea and Cappadocia (Acts 2:9). Two of the saints of the Universal Church, both of Roman origin, Tertullian and Augustine, have written that the word “Armenia” should possibly be substituted instead of “Judea”, as it is more logical that Armenia would be mentioned among those as a “foreign” country, as the apostles were living in Judea. Moreover, with regards to geographical position, Armenia was situated between Mesopotamia and Cappadocia. Therefore, the people living in Armenia may have been among the first witnesses of the gifts of the Holy Spirit.

Among the Armenian Church songs and hymns, two are dedicated to the Feast of Pentecost: “The Sent Dove” (referring to the Holy Spirit in the form of a dove that descended upon Christ during His Baptism) and “Indivisible Trinity”. These are sung during the Morning Service on the feast day. Also, during the Evening Service, the “Andastan” rite of the blessing of the four corners of the world is conducted. It is during this service that a prayer written by 12th century Armenian Church father Nerses of Lambron, is read.

In the Christian Church the teaching of divine grace is related to the Holy Spirit. According to that instruction, each virtue is a divine grace granted to the faithful by the Holy Spirit. Thus, ascribing any virtue to one’s own self, and not to God, is a grave sin and can be manifested in another, which is pride. Hence, commemoration of Pentecost is also an appeal to the faithful to avoid pride and instead, use the divine graces in life for righteous purposes and moral goals.

One of the four season fasting periods defined by the Armenian Apostolic Church is the fasting period preceding the beginning of summer. This fasting period, as well as the other ones preceding the other seasons of the year, is not preparation for any feast, and according to the tradition is called Elijah’s fast, as coincides the feast of commemoration the Prophet Elijah the next Sunday.

This fasting period preceding the beginning of summer starts the day following the feast of Pentecost (the flesh day preceding the fast is the Sunday, when the feast of Pentecost is celebrated). With the change of the Easter Feast day the beginning of the fasting period may be during the period May 11-June 14. Like the other fasting periods preceding the other seasons of the year, this one also lasts five days - from Monday till Friday.

ARMENIAN SUMMER FESTIVAL LONDON

ASF 15

15 Years of Armenian Culture, Unity & Celebration

June 15, 2025

Be Part of Something Bigger – Support the Future of ASF London!

Help us continue our mission of preserving and sharing Armenian culture in the UK. With your support, we can expand programs, reach more families, and create unforgettable experiences.

Festival Highlights Include:

- Traditional & modern performances
- Authentic Armenian food & pastries
- Family activities
- Market stalls with handmade treasures

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն

«Եթէ սիրում եք ինձ, կպահէք իմ պատուիրանները. եւ Ես պիտի աղաչեմ Հօրը, եւ Նա մի այլ Միխիթարիչ պիտի տայ ձեզ, որպէսզի յաւիտեան ձեզ հետ բնակուի. Ճշմարտութեան Հոգին, որին այս աշխարհը չի կարող ընդունել» (Յովհ.14.15-16):

Քրիստոսով Աստծուն որդեգրուած եղբայրնե՛ր եւ քոյրե՛ր,

Քրիստոնէութեան ամենամեծ տօներից մէկն է այսօր՝ Հոգեգալուստը, հունարէնից այլ լեզուներում տարածուած Պենտեկոստէն, որ Քրիստոսի Յարութեան յիսուներորդ օրն է, երբ Սուրբ Հոգին իջաւ առաքեալների վրայ:

Նոր Կտակարանի Գործք Առաքելոց գիրքը կարդացած ամէն մարդ յիշում է, թէ ինչպէս հրէական Պենտեկոստէ տօնի օրն աշխարհի տարբեր կողմերից հաւաքուածները վկաներ դարձան այն մեծ տեսարանի, երբ Սուրբ Հոգին առաքեալների վրայ իջաւ, զօրացրեց նրանց եւ խօսել տուեց այդ ազգերի լեզուներով:

Այս օրը կարող ենք յայտարարել իբրեւ Քրիստոսի Եկեղեցու ծննդեան օր: Երբ տարբեր ազգերից Երուսաղէմում հաւաքուածները տեսան ու լսեցին Սուրբ Հոգով զօրացած առաքեալներին, նրանցից երէք հազարը հաւատացին ու մկրտուեցին Յիսուս Քրիստոսի անունով՝ դառնալով առաջին բերքը Սուրբ Հոգու: Անշուշտ Հին Կտակարանի առաջին իսկ էջերից բոլոր մարգարէների միջոցով խօսուել է Սուրբ Հոգու մասին, բայց Նրա աստուածային գալստեան մասին Քրիստոս նախապէս պատմեց Իր առաքեալներին. *«Լաւ է ձեզ համար, որ Ես գնամ. որովհետեւ եթէ Ես չգնամ, Միխիթարիչը ձեզ մօտ չի գայ. իսկ եթէ գնամ, Նրան կուղարկեմ ձեզ մօտ» (Յովհ.16.7):* Սուրբ Հոգու Գալուստով ոչ թէ դադարում, այլ շարունակւում է Քրիստոսով յայտնութիւնն ու փրկագործութիւնը. *«Դեռ շատ բաներ ունեմ ձեզ ասելու, բայց այժմ չէք կարող տանել: Երբ որ գայ Նա՝ Ճշմարտութեան Հոգին, ամենայն ճշմարտութեամբ կառաջնորդի ձեզ. որովհետեւ ոչ թէ ինքն իրենից կխօսի, այլ ինչ լսի, այն կխօսի. եւ գալիք բաների մասին կպատմի ձեզ» (Յովհ. 16.12-13):* Հոգեգալուստն Աստծոյ ներկայութեան նորագոյն դարաշրջանի սկիզբ է, ուր Աստծոյ Հոգու շնորհի տակ եւ առաջնորդութեամբ է շարունակւում Եկեղեցու՝ բոլոր քրիստոնեաների կեանքը: Այլեւս ոչ միայն հրէական միջավայրի մէջ է Աստուածորդու փրկութիւնը լսելի լինու, այլ առաքեալների միջոցով ամբողջ աշխարհում: Յարութիւնից յետոյ Քրիստոս առաքեալների վրայ փչեց՝ ասելով. *«Առէ՛ք Սուրբ Հոգին...» (Յովհ. 20.22),* որը օրինակը եղաւ Քրիստոսին հաւատալու միջոցով Աստծոյ Հոգին ստանալու: Հոգեգալուստից յետոյ առաքեալների քարոզութեամբ եւ մկրտութեամբ Սուրբ Հոգին իջաւ Քրիստոսին հաւատացող բոլոր մկրտուողների վրայ: Հայաստանեայց ուղղափառ եւ առաքելական մեր եկեղեցում եւս, մկրտութեան խորհուրդից յետոյ կատարուող Դրոշմի խորհուրդի (Կ)միջոցով տեղի է ունենում ամէն մի նոր մկրտուողի անձնական հոգեգալուստը: *«Հաւատալով կնքուեցիք խոստացուած Սուրբ Հոգով, որ մեր ժառանգութեան առհաւատչեան» (Եփ.1.13):* Այն արտայայտւում է Սուրբ Հոգու ներկայութիւնն ու շնորհաբաշխումը փոխանցող սրբալոյս Միւռոնով, երբ խաչի կնիքներով (որից ծագում է ժողովրդական Կնունք անունը) նորադարձն օծւում եւ դառնում է Սուրբ Հոգու տաճար ու բնակարան:

Տէր Յիսուս փառաւորապէս երկինք համբարձուեց Իր Յարութիւնից քառասուն օր անց: Հրեշտակների ինը դասերում ինն օր պաշտուելուց յետոյ Քրիստոս տասներորդ օրը բազմեց Հօր աջ կողմում եւ, ինչպէս խոստացել էր, առաքեց Սուրբ Հոգին Վերնատանը հաւաքուած առաքեալներին: Եգիպտոսից դուրս գալուց յիսուն օր անց Սինա լերան վրայ Աստուած Մովսէսին տուեց ստուերային Օրէնքն ու պատուիրանները, իսկ Փրկչի յարութիւնից յիսուն օր անց Հոգեգալուստով Տէրը շնորհում է երկնային Օրէնքը՝ Հոգին: Սա է վկայում Յովհաննէսը՝ ասելով.*«Օրէնքը Մովսէսի միջոցով տրուեց, իսկ շնորհը եւ ճշմարտութիւնը Յիսուս Քրիստոսի միջոցով եղան» (Յովհ.1.17)*: Ինչպէս Եգիպտոսից ելած ժողովրդին անապատում Աստուած ամպի եւ կրակի սեան տեսքով առաջնորդեց Աւետեաց երկիր, այնպէս էլ այժմ Սուրբ Հոգով Եկեղեցուն է առաջնորդում դէպի փրկութիւն՝ Երկնքի Արքայութիւն. *«Քո բարի Հոգին ինձ պիտի առաջնորդի դէպի արդար երկիր» (Սղմ. 142.1 0)*,- ինչպէս մարգարէաբար ասում է սաղմոսասացը:

Աստծոյ իրական ճանաչումը եղաւ Սուրբ Հոգու միջոցով, քանի որ մինչեւ Քրիստոսի մարդեղացումը եւ Սուրբ Հոգու Գալուստը մարդկութիւնը թերի ճանաչողութիւն ուներ Աստծոյ մասին, քանի որ միայն Հօր մասին գիտէր: Մեր Աստուած, իբրեւ մէկ եւ միակ, որ

Սուրբ Երրորդութեան երէք Անձերով է արտայայտվում, մեզ ճանաչելի է դառնում Քրիստոսի գալուստով եւ Հոգու յայտնութեամբ. *«Իսկ Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որին Հայրը կ'ուղարկի Իմ անունով, Նա ձեզ ամէն բան կ'ուսուցանի եւ ձեզ կը յիշեցնի այն ամէնը, ինչ Ես ասացի ձեզ» (Յովհ. 14.26):*

Ինչպէս Կենաց ծառի ճանապարհն էր բոցեղէն սրով Աստուած պահում, նոյն կերպ էլ հրէ լեզուների տեսքով Վերնատուն իջած Սուրբ Հոգին է պահպանում Եկեղեցուն սատանայից: Այս աշխարհի իշխանը յաղթուեց Քրիստոսից եւ Փրկչի ազատագրումը բոլոր մարդկանց հասաւ Հոգով զօրացած առաքեալների միջոցով:

Վերնատունն առաջին քրիստոնէական եկեղեցին եղաւ, առաքեալների օրինակով մեզ սովորեցնելու, թէ ինչպիսի կենցաղաւարութեամբ կարող ենք արժանանալ Սուրբ Հոգու այցելութեանն ու շնորհին:

- Ղուկաս աւետարանիչը պատմում է, որ Փրկչի համբարձումից յետոյ առաքեալները, երկնքից զօրութիւն ստանալու համար Երուսաղէմում մնալու պատուերը կատարելով, աղօթքի մէջ էին միասիրտ եւ միատեղ: Նրանք ոչ միայն մարմնապէս մի վայրում էին հաւաքուած, այլեւ մի էին սրտով, միակամ էին եւ միախորհուրդ:

- Ես-ի հպարտութեան յաղթանակի, խոնարհութեան եւ եղբայրական սիրոյ մէջ է Աստուած: Միւս կարեւոր պատգամն առանց կասկածի վստահելն է ու սպասելը Տիրոջ խոստումին, անգամ եթէ ամէն բան այդ պահին հասկանալի չէ:

- Քաջութեամբ ու առանց վախի Աստծոյ մասին վկայելու՝ Քրիստոսի փրկագործութեան Բարի Աւետիսի փոխանցումով:*«Բայց երբ գայ Մխիթարիչը, որին Ես ձեզ կուղարկեմ Հօրից, Ճշմարտութեան Հոգին, որ ելնում է Հօրից, Նա կվկայի Իմ մասին. կվկայէք եւ դուք, որովհետեւ սկզբից Ինձ հետ էք» (Յովհ. 15.26-27):*

- Աստծոյ Հոգին ինչպէս լցրեց ամբողջ տունը, ուր առաքեալներն էին, այնպէս էլ լցրեց ամբողջ աշխարհը՝ ազատագրելով բոլորին. *«Տէրն ինքը Հոգին է. ուր որ Տիրոջ Հոգին է, այնտեղ ազատութիւն է» (Բ.Կորնթ.3.17):*

Ուրեմն մենք էլ զօրանանք Սուրբ Հոգով եւ մեր կեանքն աւելի հոգեւոր շէշտադրութեամբ նորոգենք այս տօնի գեղեցիկ խորհրդով՝ փառաբանելով Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն ամէն օր, մինչեւ աւարտը մեր կեանքի:

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

DAILY BIBLE READINGS FOR 2025 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

9 June	Romans 1:1-17; Matthew 7:28-8:4
10 June	Romans 1:18-25; Matthew 8:5-13
11 June	Romans 2:2-11; Matthew 8:18-27
12 June	Romans 2:12-24; Matthew 8:28-34
13 June	Romans 2:25-3:9; Matthew 9:1-8
14 June	Jeremiah 1:1-10; 38:1-13; 2 Peter 2:9-22; Matthew 2:16-18

Աղօթքներ

«Տէ՛ր, եթէ իմ շրթներս բանաս՝ բերանս քու օրհնութիւնդ պէտի երգէ:
Օրհնեա՛լ ըլլայ համագոյ եւ միասնական, անբաժանելի Սուրբ Երրորդութիւնը՝
Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին,
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:»

Prayers

"Lord, if you open my lips my mouth will sing your praise.
Blessed is the consubstantial and undivided Holy Trinity, The Father and The Son and The Holy Spirit.
Now and always and unto the ages of ages. Amen."

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Adom and Nasig Saboonchian and Family for the souls of their Mother who was also a loving Grandmother the late **DORA BADALIAN** on the 40th day memorial service of her passing on 29th April 2025 in Los Angelos USA, also for all the old and new deceased members of the **BADALIAN** and **SABOONCHIAN** Families.

By Mrs Armik Khachadourian, Mr and Mrs Anthony & Anno Day, Rebecca, Charlotte and Family, Mr and Mrs Andre & Armineh, Gevo, Gamer Khachadourian for the soul of their Husband who was also a loving Father and Grandfather the late **ABRAHAM KHACHDOURIAN** on the 3rd anniversary of his passing, also for all the old and new deceased members of the **KHACHADOURIAN** Family.

By Mr. Krikor Chelbakian for the soul of long serving Arch-deacon, the late **Arch-Deacon SOUREN KHEDERIAN** on the 7th day memorial of his passing, also for all the old and new deceased members of **KHEDERIAN** and **CHELBAKIAN** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

General

St Yeghiche Armenian Church is here to cater for all of your spiritual needs

Baptisms, Weddings, Baby Blessings, Home/Workplace Blessings, Seniors' Visitation, Hospitals/Home Visitation/Prayer, Funeral Service, Requiem, Grave Site Prayers, and more..

Please contact members of the Parish Council at Church every Sunday to request any of the above services. Alternatively, call Tel: 020 73738133 office, or write to Email: serices@styeghiche.org.uk

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan on 07548 777 147.

Hokehankist Requests: To request a requiem service and include details in our Sunday Bulletin, please contact us ***before Thursday Evening.*** Please contact Mr Viken Haladjian, or approach a member of Parish Council at church every Sunday after Badarak.

Tel: 020 7373 8133 office, 07970 146 280 mobile Email: services@styeghiche.org.uk

In Liu of Flowers: Friends and family of the deceased can make donations, in memory of their loved ones, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund.

Donations for prayers and annual membership contributions, in support of church's annual expenses, are welcome. Donations can be made;

-By a cheque made payable to "St Yeghiche Armenian Church Parish",
-By electronic bank transfer to "St Yeghiche Armenian Church Parish Ltd"
HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26
-By electronic card reader at the Church entrance.
-By QR Code directly to the Church PayPal or SumUp accounts.

PayPal Scan. Pay. Go.

Scan to Pay

St Yeghiche Armenian Church is a UK Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.

Membership: St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk